Արձանագրություն N 3

ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/2 ծածկագրով **<գնանշման հարցում>** գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 25 հոկտեմբերի 2017թ
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝

Նախագահ՝ Նարեկ Ղազարյան

անդամներ՝, Արմինե Մարտիրոսյան, Ոսկի Ֆռանգուլյան,

քարտուղար՝ Սևակ Պետրոսյան

I. Հայտերի գնահատման մասին

(Նարեկ Ղազարյան)

2. Ընդունել ի գիտություն, որ

ա/ Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 19.10.2017թ. տրված **ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/2** ծածկագրով ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման վերաբերյալ պաշտոնական պարզաբանումը (կցվում է), մեկ աշխատանքային օրով կասեցնել **ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/2** ծածկագրով ընթացակարգի հայտերի գնահատումը և **<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ**-ին և **<Տուրբոլայն> ՍՊԸ**-ին ծանուցել՝ սույն ընթացակարգի **09.10.2017թ. թիվ 2** արձանագրությամբ ստորագրված անհամապատասխանությունը շտկելու համար: Անհամապատասխանությունը շտկելու համար վերջնաժամկետ սահմանել **27.10.2017թ. ժամը 10:00-ն:**

բ/Քանի որ ավտոտեխսպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպությունները կարող են հանդիսանալ միաժամանակ արտոնագրային վճար վճարող՝ մատուցվող ծառայության մասով, և ԱԱՀ վճարող՝ մատուցվող ծառայության ընթացքում պահեստամասերի վաճառքի մասով, ապա մասնակցի կողմից ներկայացվող գնային առաջարկում ԱԱՀ-ի գումարի չափը կարող է տարբերվել գնային առաջարկի սյունակ 4-ում ներկայացվող գումարի 20%-ից՝ քանի որ այն իր մեջ կարող է պարունակել նաև արտոնագրային վճարով հարկվող հարկի գումար, սակայն գնային առաջարկի սյունակ 5-ում նշված գումարի չափը չի կարող գերազանցել սյունակ 4-ի 20%-ը: Ուստի, քանի որ **<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ-ի** կողմից 2-րդ և 11-րդ չափաբաժինների համար սյունակ 5-ը գերազանցում է սյունակ 4-ի 20%-ը, ապա այդ չափաբաժինների մասով **<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը մերժել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ն.Ղազարյան

անդամներ՝ _____ Ա.Մարտիրոսյան

_____ Ռ. Ֆռանգուլյան

քարտուղար՝ _____ Ս.Պետրոսյան

Հավելված 1
« ՀՀԱՆ-ԳՀԾՁԲ-17/2 » ծածկագրով գնանշման
հարցում գնման ընթացակարգի նիստի
արձանագրության

Մասնակիցների կողմից առաջարկած գները

Ապրանքի				Մասնակիցների անվանումները և առաջարկած գները ըստ չափաբաժինների, առանց ԱԱՀ-ի (ՀՀ դրամ)						
Հ/Հ	անվանումը	Չափի միավորը	Քանակը	<Տուրբոլայն> ՍՊԸ	<Ֆլեշ Մոտորս> ՍՊԸ*	<Մ-Բի-Ռ> ՍՊԸ*				Նախահաշվային գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ(ԳԱԶ311000, 015 SS 03, 2000թ.)	դրամ	1	56000	249166.67	337083				195000
2	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱԶ311000, 143 SS 03, 2000թ.)	դրամ	1	34000	67500	359333				195000
3	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱԶ311000, 037 SS 03, 1998թ.)	դրամ	1	45000	226166.67	397000				195000
4	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ԳԱԶ23102, 019 SS 03, 2000թ.)	դրամ	1	47000	200833.33	323167				195000
5	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ՎԱԶ 21213, 048 SS 03, 2000թ.)	դրամ	1	51000	289833.33	292833				195000
6	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ՎԱԶ 21213, 034 SS 03, 2000թ.)	դրամ	1	77000	348166.67	479833				195000
7	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ՎԱԶ 21213, 075 SS 03, 2000թ.)	դրամ	1	51000	248166.67	324500				195000
8	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ	դրամ	1	71000	195333.33	311333				195000

	(ՎԱԶ 21213, 134 SS 03, 2000թ.)									
9	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ՎԱԶ 21065, 013SS 03, 2000թ.)	դրամ	1	37000	225333.33	225833				195000
10	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (ՎԱԶ 21074, 136 SS 03, 2000թ.)	դրամ	1	61000	260833.33	372000				195000
11	Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (Շեվրոլե Ավեո, 008 SS 03, 2010թ.)	դրամ	1	18000	103500	166000				195000

*Մասնակիցը հանդիսանում է ԱԱՀ վճարող:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Հեռ.՝ (+374 11) 800 , ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՏԻԿԻՆ ՆՈՒՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Ի պատասխան 16/10/2017թ.
թիվ 10/14/18280-17 գրության

Հարգելի տիկին Խաչատրյան

Վերոնշյալ գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ՝ (այսուհետ՝ Գրություն) հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով սահմանված է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Այսինքն պատվիրատուն մասնակցին հնարավորություն է տալիս շտկելու հայտով ներկայացված փաստաթղթերը, իսկ որևէ փաստաթղթի բացակայության դեպքում լրացուցիչ ներկայացնելու այն՝ բացառությամբ գնային առաջարկի և հայտի ապահովման:

Միաժամանակ նույն կարգի 42-րդ կետի համաձայն, եթե նշված 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Վերոգրյալով պայմանավորված գտնում ենք, որ եթե Գրության մեջ նշված գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցը հայտով ներկայացրել է հրավերի պահանջներին համապատասխան կազմված գնային առաջարկ և հայտի ապահովում.

- ապա հայտով ներկայացվող մյուս փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություն արձանագրվելու դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված կարգով պետք է հնարավորություն ընձեռնվի այդ մասնակցին՝ նշված անհամապատասխանությունը շտկելու համար.

- և այդ փաստաթղթերի մասով բացակայում է միայն վերջիններիս ստորագրման լիազորությունը մասնակցի ղեկավարի կողմից այլ անձի վերապահելու վերաբերյալ լիազորագիրը, ապա գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված կարգով պետք է հնարավորություն ընձեռնվի այդ մասնակցին՝ հիշյալ լիազորագիրը ներկայացնելու համար:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԹԱՄԱՉՅԱՆ

Կատ. Հանրային ֆինանսների կառավարման
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258